# ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## 2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին

Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

2002 թվականի հոկտեմբերի 7-ի Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) 27-րդ հոդվածի համաձայն

**պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.**

1. Կանոնադրության 13-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Խորհուրդի կազմի մեջ են մտնում անդամ պետությունների ղեկավարները կամ անդամ պետությունների կառավարությունների ղեկավարները, եթե, համաձայն իրենց պետության օրենսդրության, նրանք իրավասու են որոշումներ կայացնելու Խորհրդի իրավասության ներքո գտնվող հարցերի շուրջ».

բ) վեցերորդ պարբերության առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Խորհրդի նախագահ է (այսուհետ՝ Նախագահ) հանդիսանում Խորհրդի այն անդամը, ով ներկայացնում է այն պետությունը, որի տարածքում անցկացվում է Խորհրդի հերթական նիստը, եթե Խորհուրդը այլ որոշում չի կայացնում»:

2. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կանոնադրության 26-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Կատարված է Աստանա քաղաքում 2018 թվականի նոյեմբերի 8-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության քարտուղարությունում, որը սույն Արձանագրությունը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Հայաստանի Հանրապետության կողմից**
*/ստորագրություն/*

**Ղրղզստանի Հանրապետության կողմից**
*/ստորագրություն/*

**Բելառուսի Հանրապետության կողմից**
*/ստորագրություն/*

**Ռուսաստանի Դաշնության կողմից**
*/ստորագրություն/*

**Ղազախստանի Հանրապետության կողմից**
*/ստորագրություն/*

**Տաջիկստանի Հանրապետության կողմից**
*/ստորագրություն/*

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության» Կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն